

“ECONOMICS AUDIT” LLC

Ֆինանսական հաշվետվություններ և  
Անկախ աուդիտորի եզրակացություն  
«ՍԹԻԼ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ

31 դեկտեմբերի 2025թ.

# “ECONOMICS AUDIT” LLC

## Բովանդակություն

<u>Անկախ աուդիտորի եզրակացություն</u>	<u>Էջ</u> <u>3</u>
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	<u>6</u>
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	<u>7</u>
Սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվություն	<u>9</u>
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	<u>10</u>
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	<u>12</u>

# “ECONOMICS AUDIT” LLC



## Անկախ աուդիտորական եզրակացություն

«ՍԹԻԼ ԿՈՆՑԵՌՆ» Սահմանափակ Պատասխանատվությամբ ընկերություն

Մեր կողմից իրականացվել է «ՍԹԻԼ ԿՈՆՑԵՌՆ» Սահմանափակ Պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ Կազմակերպություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, պահուստներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Կազմակերպության 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների(ՖՀՄՍ):

### **Կարծիքի հիմքեր**

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *“Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար”* բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից համաձայն Հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

**Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար.**

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ

նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Կազմակերպությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

***Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար***

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում խարդախությունների կամ սխալների հետևաբով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը:

Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտատաճործողների դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն աճող աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր բայց ոչ Կազմակերպության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրափակումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է

իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Կազմակերպության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ:

Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարելի է հանգեցնել նրան, որ Կազմակերպությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

2026 թ. ԱՄՅԻՄԻ 19

Տնօրեն

Աուդիտոր



Գ.Գիսիթարյան

**ՇԱԳՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2025 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ**

**Հազար ՀՀ դրամով**

	Ծան.	2025 թ.	2024 թ.
Հասույթ	5,21	9,463,778	6,848,234
Վաճառքի ինքնարժեք	6,21	(7,555,469)	(6,336,258)
<b>Համախառն շահույթ /(վնաս)</b>		<b>1,908,309</b>	<b>511,976</b>
Այլ եկամուտ	7	6,008	12,368
Իրացման ծախսեր	8	(366,426)	(191,496)
Վարչական ծախսեր	9	(354,964)	(170,045)
Այլ ծախսեր		(196,861)	(52,258)
<b>Գործառնական գործունեությունից շահույթ /(վնաս)</b>		<b>996,066</b>	<b>110,545</b>
Ֆինանսական ծախսեր	10	(111,766)	(296,879)
Արտարժույթի փոխարկումից օգուտ/(վնաս)			130,939
<b>Շահույթ/(վնաս) նախքան շահութահարկով հարկումը</b>		<b>884,300</b>	<b>(55,395)</b>
Շահութահարկի գծով ծախս / (փախհատուցում)	11	159,174	28,760
<b>Տարվա շահույթ /(վնաս) մինչև հարկելը</b>		<b>725,126</b>	<b>(26,635)</b>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		(1,767,598)	
Ակտիվների վերագնահատման աճ / (նվազում)			
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՇԱԳՈՒՅԹ/(ՎՆԱՍ)</b>		<b>(1,042,472)</b>	<b>(26,635)</b>

Սմբատ Խաչիկյան

Տնօրեն



Գրիգոր Պողոսյան

Գլխավոր հաշվապահ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
2025 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ**

**Հազար ՀՀ դրամով**

	Ծան.	2025 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<b>Ակտիվներ</b>			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	12	1,639,535	2,216,427
Կենսաբանական ակտիվներ			
Ներդրումային գույք			
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ		800	
Ոչ նյութական ակտիվներ		1,734	1,712
Բաժնեմասնության մեթոդով հաշվառվող ներդրումներ			
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ		75,323	
Հետաձգված հարկային ակտիվներ			4,509
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ			99,478
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>1,717,392</b>	<b>2,322,126</b>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	13	2,122,760	3,649,965
Առևտրային և այլ դեբիտորական պարտք	14	209,347	2,141,459
Ընթացիկ հարկային ակտիվներ շահութահարկի գծով			
Ընթացիկ ֆինանսական ակտիվներ		741	
Դրամական միջոցներ և դրանց մնացորդներ	15	317,251	127,950
Այլ ընթացիկ ֆինանսական ակտիվներ			
Այլ ընթացիկ ակտիվներ		1,064,626	
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>		<b>3,714,725</b>	<b>5,919,374</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>5,432,117</b>	<b>8,241,500</b>

**Սեփական կապիտալ և պարտավորություններ**

*Սեփական կապիտալ և պարտավորություններ*

Կանոնադրական (քաժնետիրական) կապիտալ	2,258,250	2,258,250
Վերագնահատման պահուստ		
Կուտակված շահույթ / (վնաս)	(1,090,597)	(48,125)
Լրացուցիչ կապիտալ	116,671	681,135
Սեփական կապիտալի այլ տարրեր		

**ԸՆԴԱՄԵՆԸ սեփական կապիտալ** 1,284,324 2,891,260

*Ոչ ընթացիկ պարտավորություններ*

Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ	17	299,655	3,409,374
Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ			78,552

*Ջետաձգված հարկային պարտավորություններ*

Եկամուտներին վերաբերող շնորհներ

Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ

**ԸՆԴԱՄԵՆԸ ոչ ընթացիկ պարտավորություններ** 299,655 3,487,926

*Ընթացիկ պարտավորություններ*

Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ	17	2,462,796	973,670
Առևտրային և այլ կրեդիտորական պարտք	18	1,342,309	855,845

Շահութահարկի գծով պարտավորություն  
Պահուստներ այլ պարտավորությունների և ծախսումների գծով

Ստացված կանխավճարներ	43,033		
Այլ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ			32,799

**ԸՆԴԱՄԵՆԸ ընթացիկ պարտավորություններ** 3,848,138 1,862,314

**ԸՆԴԱՄԵՆԸ պարտավորություններ** 4,147,793 5,350,240

**ԸՆԴԱՄԵՆԸ սեփական կապիտալ և պարտավորություններ** 5,432,117 8,241,500

Սմբատ Խաչիկյան

Տնօրեն



Գրիգոր Պողոսյան

Գլխավոր հաշվապահ

12-34 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
2025 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

Հազար ՀՀ դրամով

	Բաժնետիր ական Ծան.	Պահուստայ ին կապիտալ	Հավելյալ վճարված կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
Մնացորդը 2024 թ. հունվարի 1-ի դրությամբ	2,258,250	681,135		(21,490)	2,917,895
Տարվա շահույթ	-			(26,635)	(26,635)
Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,258,250	681,135		(48,125)	2,891,260
Տարվա շահույթ	-	-	-	(1,042,472)	(1,042,472)
Կապիտալի համալրում		(564,464)			(564,464)
Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,258,250	116,671		(1,090,597)	1,284,324

12-34 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

  
 Սմբատ Խաչիկյան  
 Տնօրեն

  
 Գրիգոր Պողոսյան  
 Գլխավոր հաշվապահ

**ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՍԶԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
2025 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ**

**Հազար ՀՀ դրամով**

	Ծան.	2025թ.	2024թ.
<b>Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից</b>			
<b>Դրամական միջոցների տարեսկզբին մնացորդ</b>		<b>127,950</b>	<b>29,776</b>
Իրացումից մուտքեր		8,040,847	337,739
Գործառնական այլ գործունեությունից մուտքեր	5,7		842,861
Նյութերի, ապրանքների ձեռք բերման գծով ելքեր	6,8,9	(4,046,616)	
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	15	(598,767)	(1,773,019)
Վճարումներ աշխատակիցներին	19	(556,275)	
Վճարումներ բյուջե	19	(3,751,528)	(23,864)
Վճարված տոկոսներ	18	(34,045)	(97,952)
Այլ վճարումներ		(127,951)	
<b>Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից</b>		<b>2,967,139</b>	<b>(592,419)</b>
<b>Ընդամենը գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցներ</b>		<b>(946,385)</b>	<b>(714,235)</b>
<b>Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից</b>		<b>431,589</b>	<b>(380,072)</b>
Ներդրումային այլ գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		443,153	
Ֆինանսական գործունեությունից մուտքեր Շահաբաժինների և տոկոսների ստացումից			
<b>Ընդամենը ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր</b>		<b>443,153</b>	<b>-</b>
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումների ելքեր		11,564	(380,072)
Ֆինանսական գործունեությունից ելքեր	18	-	
<b>Ընդամենը ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր</b>		<b>11,564</b>	<b>(380,072)</b>
<b>Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից</b>			
Մուտքեր վարկերից և փոխառություններից	18	2,733,996	1,247,788
Ֆինանսական գործունեությունից այլ մուտքեր	18	4,219	(41,003)

<b>Ընդամենը ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր</b>		<u>2,738,215</u>	<u>1,206,785</u>
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից ելքեր		1,932,803	
Վճարված շահաբաժիններ , տոկոսներ, այլ ելքեր		102,340	
<b>Ընդամենը ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր</b>		<u>2,035,143</u>	
<b>Ընդամենը ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		<u>704,072</u>	<u>1,206,785</u>
<i>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ / (նվազում)</i>		<u>189,276</u>	<u>112,478</u>
<b>Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարվա սկզբում</b>		<u>127,950</u>	<u>29,776</u>
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը արտարժույթով պահվող դրամական միջոցների մնացորդների վրա		25	(14,304)
<b>Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարվա վերջում</b>	16	<u>317,251</u>	<u>127,950</u>

12-34 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Սմբատ Խաչիկյան

Տնօրեն



Գրիգոր Գողոսյան

Գլխավոր հաշվապահ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Սթիլ Կոնցեռն» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն (Ընկերություն) հիմնադրվել է 2013 թ. փետրվարի 27-ին Հայաստանի Հանրապետությունում՝ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջներին: Ընկերությունը Հայաստանում դասվում է խոշոր շինարարական արտադրողների շարքին, իր հումքը ներկրում է Ռուսաստանի, Պարսկաստանի, Ուկրաինայի, Հարավային Կորեայի, Ղազախստանի, Հնդկաստանի առաջատար արտադրողներից:

Ընկերությունը ներգրավված է գործունեության հետևյալ ոլորտներում.

- Տանիքի ծածկերի արտադրություն
- Պրոֆիլների, ջրատար խողովակների, պրոֆիլների, կղմինդրների արտադրություն
- Ապրանքների ներմուծում, մանրածախ և մեծածախ վաճառք:

Ընկերության գրանցման և իրավաբանական հասցեն է՝ Կենտրոն թաղամաս, շենք 6, բնակարան 39 / ք. Հրազդան, 2301, Կոտայքի մարզ, Հայաստանի Հանրապետություն:

## 2. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

## 3. ԿԱՐԵՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԶԱՐԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են այն ենթադրության վրա, որ Ընկերությունը գործում է անընդհատության սկզբունքով և կշարունակի գործել տեսանելի ապագայում:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով (այսուհետ՝ հազար դրամ), եթե այլ բան նշված չէ:

Ընկերության կողմից կիրառված փոխարժեքները հետևյալն են՝

	2025 թ. <u>դեկտեմբերի 31</u>	2024 թ. <u>դեկտեմբերի 31</u>
<b>Փակման փոխարժեք (ՀՀ դրամ)</b>		
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	381.36	396.56
ՀՀ դրամ/1 Եվրո	449.01	413.89
ՀՀ դրամ/1 ռուբլի	4.87	3.71

## Պատրաստման հիմունքները

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի հիման վրա:

Պատմական արժեքը սովորաբար հիմնված է ակտիվների դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

Իրական արժեքն այն գումարն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքի արդյունքում չափման ամսաթվի դրությամբ կստացվեր ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ անկախ նրանից, թե արդյոք գինը ուղղակիորեն դիտարկելի է կամ գնահատվել է՝ օգտագործելով այլ գնահատման մեթոդներ: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը գնահատելիս՝ Ընկերությունը հաշվի է առնում ակտիվի կամ պարտավորության բնութագրերը, եթե շուկայի մասնակիցները այդ բնութագրերը հաշվի կառնեին չափման ամսաթվի դրությամբ ակտիվի կամ պարտավորության գինը որոշելիս: Այս ֆինանսական հաշվետվություններում չափման և/կամ այլ բացահայտումների նպատակով իրական արժեքը որոշվում է նման սկզբունքներով, բացառությամբ բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքներից, որոնք ՖՀՄՍ 2-ի շրջանակում են, վարձակալության գործարքներից, որոնք ՀՀՄՍ 17-ի շրջանակում են, ինչպես նաև չափումներից, որոնք թեև համանման են իրական արժեքին, սակայն իրական արժեքով չեն, մասնավորապես իրացման զուտ արժեքը՝ ՀՀՄՍ 2-ի համաձայն կամ օգտագործման արժեքը՝ ՀՀՄՍ 36-ի համաձայն:

Ի յրոմս, ֆինանսական հաշվետվությունների նպատակով իրական արժեքի չափումները դասակարգվում են մակարդակ 1, 2 և 3-ի՝ ելնելով իրական արժեքի չափումներում օգտագործված տվյալների դիտարկելիության աստիճանից, ինչպես նաև այդ սկզբնական տվյալների՝ իրական արժեքով չափման ամբողջական պատկերի վրա ազդեցության էականության աստիճանից: Այդ մակարդակները նկարագրվում են հետևյալ կերպ՝

- Մակարդակ 1-ի դեպքում ելակետային տվյալներ են հանդիսանում ակտիվ շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների նշված գները (չճշգրտված), որոնք Բանկին հասանելի են չափման ամսաթվի դրությամբ:
- Մակարդակ 2-ի ելակետային տվյալները իրենցից ներկայացնում են մակարդակ 1-ում նշված գներից տարբերվող ելակետային տվյալները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են ակտիվների կամ պարտավորությունների գծով:
- Մակարդակ 3-ի ելակետային տվյալներն իրենցից ներկայացնում են ակտիվների կամ պարտավորությունների գծով ոչ դիտարկելի ելակետային տվյալներ:

Հայաստանի Հանրապետությունում գրանցված Ընկերությունն իր հաշվապահական հաշվառումը վարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների համաձայն:

## Գործառնական արժույթ

Ֆինանսական հաշվետվություններում ներառված միավորները չափվում են այն տնտեսական միջավայրում գործող արժույթով, որում Ընկերությունն իրականացում է իր գործունեությունը (գործառնական արժույթ): Ընկերության գործառնական արժույթը ՀՀ դրամն է (այսուհետև՝ դրամ): Դրամը նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Բոլոր արժեքները կլորացված են հազար ՀՀ դրամի չափով, եթե այլ բան նշված չէ:

## Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե դա չի պահանջվում կամ թույլատրվում որևէ հաշվապահական հաշվառման ստանդարտով կամ մեկնաբանությամբ, և հստակ բացահայտված չէ ՀՆԿերության հաշվապահական քաղաքականության մեջ:

## Հարկում

Շահութահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի գծով պարտավորությունը և հետաձգված հարկը:

## Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկի գծով պարտավորությունը հիմնված է տարվա հարկվող շահույթի վրա: Հարկվող շահույթը տարբերվում է համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում ներկայացվող շահույթից եկամտի և ծախսի այնպիսի տարրերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարրերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: ՀՆԿերության ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ մտած կամ, ըստ էության, ուժի մեջ մտած հարկի դրույքաչափերը:

## Հետաձգված հարկ

Հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև:

Հետաձգված հարկային պարտավորությունները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները, ընդհանուր առմամբ, ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները: Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա: Ի լրումն դրա, հետաձգված հարկային պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջացել է գույվիլի սկզբնական ճանաչումից:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է վերանայվի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվի այն չափով, որով այնևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է չափվեն հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել, կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումը պետք է արտացոլի հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

### **Տարվա ընթացիկ և հետաձգված հարկեր**

Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են ֆինանսական արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարրերի, որոնք ճանաչվել են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում, ինչի դեպքում ընթացիկ և հետաձգված հարկերը նույնպես ճանաչվում են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում: Եթե ընթացիկ կամ հետաձգված հարկերն առաջանում են բիզնեսների միավորման սկզբնական հաշվապահական հաշվառման արդյունքում, ապա հարկային հետևանքները ներառվում են բիզնեսների միավորման հաշվապահական հաշվառման մեջ:

### **Հասույթի ճանաչում**

Ընկերությունը հասույթը ճանաչում է այնպես, որպեսզի պատկերվի խոստացված ապրանքների կամ ծառայությունների փոխանցումը հաճախորդներին այն չափով, որն արտացոլում է այն հատուցումը, որը Ընկերությունն ակնկալում է ստանալ այդ ապրանքների կամ ծառայությունների դիմաց:

### **Ապրանքների վաճառք**

Ապրանքների վաճառքից հասույթը ճանաչվում է ՖՀՄՍ 15-ում ներկայացված 5 քայլից բաղկացած մոտեցմամբ.

Ընկերությունը հստակեցնում է պայմանագիրը հաճախորդի հետ;

Ընկերությունը պայմանագրով սահմանում է կատարման պարտավորությունները;

Գործարքի գինը սահմանում է Ընկերությունը.

Գործարքի գինը բաշխվում է պայմանագրերուկ կատարման պարտավորություններին.

• Հասույթը ճանաչվում է միայն այն դեպքում, երբ Ընկերությունը կատարում է կատարման պարտավորությունը:

Ընկերությունը ճանաչում է հասույթը, երբ պարտավորությունը կատարվում է, այսինքն՝ երբ ապրանքները վաճառվում են դեղատներում մանրածախ եկամուտների համար կամ մատակարարվում հաճախորդներին մեծածախ վաճառքի համար:

Եկամուտը կրճատվում է հաճախորդների վերադարձի, զեղչերի և այլ նմանատիպ դեպքերում:

### **Հիմնական միջոցներ**

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով, հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկման բոլոր վնասները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռք բերման գինը, այդ թվում՝ ներմուծման տուրքերը և գնման

չփոխհատուցվող հարկերն ու այլ ուղղակիորեն վերագրելի ծախսերը: Երբ հիմնական միջոցի միավորը պարունակում է օգտակար ծառայության տարբեր ժամկետներ ունեցող բաղադրիչներ, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Հիմնական միջոցի միավորի փոխարինման համար կատարված ծախսը կապիտալացվում է դուրս գրված միավորի հաշվեկշռային արժեքով: Այլ հետագա ծախսերը կապիտալացվում են, եթե այդ ծախսից առաջանում են հետագա տնտեսական օգուտներ: Մնացած բոլոր ծախսերը, այդ թվում վերանորոգման և սպասարկման, ճանաչում են շահույթում և վնասում:

Մաշվածությունը ճանաչվում է այնպես, որ դուրս գրվի ակտիվների սկզբնական արժեքը, հանած օգտակար ծառայության ընթացքում դրանց մնացորդային արժեքները՝ օգտագործելով գծային մեթոդը: Գնահատված օգտակար ծառայության ժամկետները, մնացորդային արժեքները և մաշվածության մեթոդները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, բոլոր տեսակի գնահատումներում փոփոխությունների ազդեցությունը հաշվառելով առաջընթաց սկզբունքով:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

Շենք-շինություններ	40 տարի
Արտադրական գծեր	20 տարի
Սառնարաններ և այլ գույք	5-9 տարի
Փոխադրամիջոցներ	7-9 տարի
Համակարգիչներ	2-8 տարի
Տնտեսական գույք	3-15 տարի

Հիմնական միջոցների տարրն ապաճանաչվում է այն օտարելիս, կամ երբ այդ ակտիվի շարունակական օգտագործումից այլևս տնտեսական օգուտներ չեն ելթադրվում:

Հիմնական միջոցների վաճառքից կամ շրջանառությունից դուրս բերումից առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է որպես վաճառքից մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում շահույթում կամ վնասում:

#### **Վերամշակելի տարաներ**

Վերամշակելի տարաներն օգտագործվում են ապրանքների արտադրության կամ վաճառքի ժամանակ: Տարան ներկայացված է սկզբնական արժեքով, հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից վնասները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռք բերման գինը, ներառյալ ներմուծման տուրքերը և գնման չփոխհատուցվող հարկերն ու այլ ուղղակիորեն վերագրելի ծախսերը:

Մաշվածությունը հաշվարկվում է շահույթում կամ վնասում, ուղիղ գծային մեթոդով՝ տարայի օգտակար ծառայության ժամկետում, որը 5 տարի է: Այս ակտիվների մաշվածությունը սկսվում է հաշվարկվել այն ժամանակ, երբ ակտիվները պատրաստ են իրենց նպատակային նշանակությամբ օգտագործվելու համար:

Վերամշակելի տարաների մնացորդը նվազեցվում է ըստ վնասված կամ կտրված միավորների իրական քանակի:

#### **Ընկերությունը որպես վարձակալ (կիրառվել է 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունների վրա)**

Ընկերությունը սկզբնական ճանաչման ժամանակ գնահատում է՝ արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության իրավունք կամ պարունակում է վարձակալություն: Ընկերությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և համապատասխան

վարձակալության գծով պարտավորությունը՝ կապված բոլոր վարձակալության պայմանագրերի հետ, որոնցում ևս վարձակալ է, բացառությամբ կարճաժամկետ (սահմանվում է որպես վարձակալություն՝ 12 ամիս կամ ավելի ցածր վարձակալության ժամկետով) և փոքրածեք ակտիվների վարձակալությունից (օրինակ՝ պլանշետներ և անհատական համակարգիչներ, գրասենյակային կահույքի և հեռախոսների փոքր իրեր):

Այս վարձակալությունների գծով Շնկերությունը ճանաչում է վարձակալական վճարները գործառնական ծախսերում գծային հիմունքով՝ քանի որ մեկ այլ հաշվառման հիմունք առավել ներկայացուցչական չէ ստացվելիք տևտեսական օգուտները արտացոլելու տեսանկյունից: Մեկնարկի ամսաթվին վարձակալը պետք է չափի վարձակալության գծով պարտավորությունը՝ այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք դեռևս չեն վճարվում այդ ամսաթվին: Վարձավճարները պետք է զեղչվեն կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել: Եթե այդ դրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, վարձակալը պետք է կիրառի վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորությունը ներկայացվում է որպես առանձին տողով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

Վարձակալության գծով պարտավորությունը հետագայում չափվում է դրա սկզբնական ճանաչման արժեքին ավելացնելով տոկոսային համապատասխան ծասերը (օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը) և նվազեցնելով համապատասխան մարումների արժեքով:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես ճանաչվում է վարձակալության գծով պարտավորությունների համահունչ՝ ճշգրտելով արժեքը առկա կանխավճարների և սկզբավորման ծախսումներ արժեքով: Հետագայում այս ակտիվներ չափվում են սկզբնական արժեքի, կուտակված մաշվածության և արժեզրկման արժեքների տարբերությամբ:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ամորտիզացվում են հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության պայմանագրի ժամկետից նվազագույն ժամանակահատվածում: Եթե վարձակալությամբ փոխանցվում է հիմնական ակտիվի սեփականությունը կամ օգտագործման իրավունքով ակտիվի արժեքը արտացոլում է, որ Շնկերությունն ակնկալում է կիրառել գնման օպցիոնը, դրա հետ կապված օգտագործման իրավունքով ակտիվը մաշված է հիմնական ակտիվի օգտակար ծառայության ընթացքում: Մաշվածությունը սկսվում է վարձակալության մեկնարկի օրվանից:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են առանձին տողով:

Շնկերությունը կիրառում է ՀՀՍՍ 36 ստանդարտը, որպեսզի որոշի՝ արդյոք ակտիվի օգտագործման իրավունքը արժեզրկված է և հաշվի է առնում արժեզրկումից ցանկացած բացահայտված վնաս՝ ինչպես նկարագրված է Հիմնական միջոցներն քաղաքականության մեջ:

### **Նյութական և ոչ նյութական ակտիվների արժեզրկում, բացի գուղվից**

Յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում Շնկերությունը վերանայում է իր նյութական և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքները՝ որոշելու համար արդյոք կա որևէ հայտանիշ, որ այս ակտիվներում եղել են արժեզրկումից կորուստներ: Եթե առկա է որևէ նմանատիպ հայտանիշ, ապա գնահատվում է ակտիվների փոխհատուցվող գումարը, որպեսզի գնահատվեն արժեզրկումից կորուստները (եթե այդպիսիք կան): Եթե առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը հնարավոր չէ որոշել, Շնկերությունը գնահատում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին այդ ակտիվը պատկանում է: Եթե հնարավոր է որոշել բաշխման ողջամիտ և հետևողական հիմունք, ապա կորպորատիվ ակտիվները ևս բաշխվում են առանձին դրամաստեղծ միավորներին, այլապես դրանք

բաշխվում են դրամաստեղծ ակտիվների փոքրագույն խմբին, որոնց համար կարելի է որոշել խելամիտ և հետևողական հիմունք:

Անորոշ օգտակար ծառայությամբ և օգտագործման համար դեռևս ոչ մատչելի ոչ նյութական ակտիվները ստուգվում են արժեզրկման առկայության համար առնվազն տարեկան մեկ անգամ, ինչպես նաև երբ առկա է հայտանիշ, որ ակտիվը կարող է արժեզրկված լինել: Փոխհատուցվող գումարն իրական արժեքից (հասած վաճառքի հետ կապված ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնն է. օգտագործման արժեքը գնահատելիս ակնկալվող ապագա դրամական հոսքերը բերվում են ներկա արժեքի՝ կիրառելով միևնույն հարկումը տոկոսադրույք, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումը և ակտիվին բնորոշ ռիսկերը, որոնցով ապագա գնահատված հոսքերը չեն ճշգրտվել:

Եթե ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) փոխհատուցվող գումարը գնահատվում է ավելի քիչ քան հաշվեկշռային արժեքը, ապա հաշվեկշռային արժեքն իջեցվում է մինչ փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստն անհապաղ ճանաչվում է ֆինանսական արդյունքում, եթե տվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով: Վերջինիս դեպքում արժեզրկումից կորուստը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում(տես վերը նշված ծանոթագրությունը հիմնական միջոցների մասին):

Եթե հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչ վերանայված փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ավելացումից հետո հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը կորոշվեր, եթե նախորդ ժամանակաշրջաններում ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորուստի հակադարձումը անմիջապես ճանաչվում է ֆինանսական արդյունքում, եթե տվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով, ինչի դեպքում արժեզրկումից կորուստի հակադարձումը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի աճ (տես վերը նշված ծանոթագրությունը հիմնական միջոցների մասին):

## **Պաշարներ**

Պաշարները հաշվառվում են հաշվեկշռային արժեքի և զուտ իրացման արժեքի նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը որոշվում է առաջին մուտք՝ առաջին ելք հիմունքով: Չուտ իրացվելի արժեքն իրենից ներկայացնում է պաշարների գնահատված իրացման արժեքը՝ հանած բոլոր այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են այն ավարտելու և վաճառքն իրականացնելու համար:

## **Պահուստներ**

Պահուստները ճանաչվում են, երբ Հնկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական), որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Հնկերությունից կպահանջվի կատարել պարտականությունը և պարտականության գումարը հավաստիորեն կարող է գնահատվել:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտականությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերը և անորոշությունները: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Եթե ակնկալվում է, որ երրորդ կողմն ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է

դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ Ընկերության կողմից պարտականությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

### **Ֆինանսական գործիքներ**

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

### **Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ**

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում պարտքային գործիքի ամորտիզացված արժեքի հաշվարկի և տոկոսային եկամտի բաշխման մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն գեղչում է ապագա գնահատված կանխիկի ստացումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարզևավճարներ կամ գեղչեր) պարտքային գործիքի ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ, ըստ անհրաժեշտության, ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա զուտ հաշվեկշռային արժեքին:

### **Ֆինանսական ակտիվներ.**

Բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում և ապաճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, երբ ֆինանսական ակտիվի ձեռքբերումը կամ վաճառքը համաձայնեցվում է պայմանագրով, և ըստ այդ պայմանագրի պայմանների անհրաժեշտ է ապահովել ֆինանսական ակտիվի մատակարարումը համապատասխան շուկայում սահմանված ժամանակահատվածում, և սկզբնապես չափվում են իրական արժեքով, գումարած գործարքի գծով ծախսերը:

ՖՀՄՍ 9 շրջանակներում ճանաչված բոլոր ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ հիմք ընդունելով կազմակերպության ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը և ֆինանսական ակտիվների պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Մասնավորապես՝

Պարտքային գործիքներ, որոնք պահվում են բիզնես մոդելում, որի նպատակն է հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը և որոնք ունեն պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ (SPPI), հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

Պարտքային գործիքներ, որոնք պահվում են բիզնես մոդելում, որի նպատակն է հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, ինչպես նաև վաճառել պարտքային գործիքները և որոնք ունեն պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված

տոկոսների վճարումներ, հետագայում չափվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով:

Բոլոր այլ պարտքային գործիքները (պարտքային գործիքներ իրական արժեքի հիմունքով կառավարվող կամ վաճառքի համար պահվող) և բաժնային գործիքներում ներդրումները հետագայում գնահատվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով:

Պարտքային գործիքներ ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող. Ընկերությունը գնահատում է ֆինանսական ակտիվի դասակարգումը և չափումը՝ հիմք ընդունելով ակտիվի՝ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի հատկանիշները և ակտիվի կառավարման նպատակով Ընկերության բիզնես մոդելը: Որպեսզի ակտիվը դասակարգվի և չափվի ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով, պայմանագրային պայմանները տեսք է առաջացնեն դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ (SPPI):

SPPI թեստի նպատակներով, մայր գումար է հանդիսանում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման ժամանակ: Մայր գումարը կարող է փոփոխվել ֆինանսական ակտիվի գործողության ժամանակահատվածի որջ ընթացքում (եթե առկա են մայր գումարի մարումներ): Տոկոսն իրենից ներկայացնում է հատուցումներ դրամի ժամանակային արժեքի մասով, որոշակի ժամանակահատվածի ընթացքում չմարված մայր գումարի գծով վարկային ռիսկի և այլ հիմնական վարկային ռիսկերի և ծախսերի, ինչպես նաև շահույթի սահմանաչափի մասով: SPPI գնահատումը իրականացվում է այն արժույթով, որով արտահայտվում է ֆինանսական ակտիվը:

Պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ, համապատասխանում են հիմնական վարկային համաձայնագրին: Պայմանագրային պայմանները, որոնք ներկայացնում են պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի ենթարկվածությունը ռիսկերին կամ անկայունությանը, որոնք չեն վերաբերվում հիմնական վարկային համաձայնագրին, ինչպիսիք են բաժնետոմսերի կամ ապրանքների գների ռիսկերի ենթարկվածությունը, չեն առաջացնում պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ: Ստեղծված կամ ձեռք բերված ֆինանսական ակտիվը կարող է հանդիսանալ հիմնական վարկային համաձայնագիր, անկախ այն բանից, արդյոք այն հանդիսանում է վարկ իր իրավական ձևով:

Ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով բիզնես մոդելների գնահատումը իրականացվում է ՖՀՄՍ 9 սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվի դասակարգումը որոշելու նպատակով: Բիզնես մոդելը կիրառվում է հետադարձ հիմունքներով բոլոր այն ֆինանսական ակտիվների նկատմամբ, որոնք առկա են եղել ՖՀՄՍ 9 սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ: Ընկերությունը որոշում է բիզնես մոդելների այնպիսի մակարդակ, որն արտացոլում է ֆինանսական ակտիվների խմբերի համատեղ կառավարման ձևը հատուկ բիզնես նպատակների իրականացման համար: Ընկերությանբիզնես մոդելը կախված չէ առանձին գործիքի մասով ղեկավարության մտադրություններից, հետևաբար, բիզնես մոդելի գնահատումն իրականացվում է՝ հիմք ընդունելով ավելի բարձր մակարդակի համախմբման, այլ ոչ անհատապես դիտարկման սկզբունքը:

Ընկերությունն ունի մեկ բիզնես մոդել ֆինանսական գործիքների կառավարման մասով, որն արտացոլում է Ընկերության՝ իր ֆինանսական ակտիվների կառավարման մեթոդները դրամական հոսքեր ստեղծելու նպատակով: Ընկերության բիզնես մոդելը որոշում է, արդյոք դրամական միջոցները առաջանում են պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հավաքագրումից, ֆինանսական ակտիվների վաճառքից կամ այս երկու բաղադրիչների կիրառումից:

Բիզնես մոդելը գնահատելիս Ընկերությունը դիտարկում է հասանելի համապատասխան որը տեղեկատվությունը: Այնուամենայնիվ, այս գնահատումը չի իրականացվում հիմք ընդունելով այն սցենարները, որոնք Ընկերությունը չի կարող կանխատեսել, այսպես կոչված «վատագույն իրավիճակ» կամ «սթրեսային իրավիճակ» սցենարները:

Ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը որոշում է, թե արդյոք նոր ճանաչված ֆինանսական ակտիվները հանդիսանում են գործող բիզնես մոդելի մաս, թե արդյոք դրանք արտացոլում են նոր բիզնես մոդելի մեկնարկը:

Արժեզրկում. Առևտրային դեբիտորական պարտքերի և դրամական միջոցների և դրանց համարժեք մնացորդների համար, Ընկերությունը կիրառել է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոտեցումը՝ ամբողջ ժամկետում ԱՊԿ վնասի գծով պահուստի չափման համար:

Ընկերությունը որոշում է այդ հոդվածներով ակնկալվող պարտքային կորուստները՝ օգտագործելով պահուստի մատրիցա, որը գնահատվում է պարտապանների ժամկետանց կարգավիճակի հիման վրա պարտքային կորուստի պատմական փորձի հիման վրա, որը հարմարեցված է ըստ անհրաժեշտության՝ արտացոլելու ընթացիկ պայմանները և ապագա տնտեսական պայմանների գնահատումները:

Ֆինանսական ակտիվների փոփոխությունը և ապաճանաչումը. Ֆինանսական ակտիվների փոփոխությունները տեղի են ունենում այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը կառավարող պայմանագրային պայմանները վերանայվում են կամ այլ կերպ փոփոխվում են ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման և մարման ժամկետի միջև: Փոփոխությունը ազդեցություն է ունենում պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի գումարի և/կամ ժամկետների վրա անմիջապես կամ ապագայում:

Ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստների ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում. Ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստները ներկայացվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից նվազեցում:

### **Ֆինանսական պարտավորություններ**

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթում կամ վնասում իրական արժեքով չափվող կամ այլ ֆինանսական պարտավորություններ:

Այլ ֆինանսական պարտավորություններ. այլ ֆինանսական պարտավորությունները (ներառյալ վարկերը և փոխառությունները) սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած գործարքի գծով ծախսերը: Դրանք այնուհետև չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքների մեթոդը ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը հաշվարկելու և տոկոսադրույքի ծախսը համապատասխան ժամանակահատվածում բաշխելու համապատասխան մեթոդ է:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում և փոփոխություն. Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ընկերության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված ու վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

**Որակական, քանակական գործոնների և դրանց համակցված ազդեցության հաշվի առնելը.** ընկերությունը եզրակացնում է, որ փոփոխությունը էական է հետեւյալ որակական գործոնների արդյունքում:

- Ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն;
- Գրավի ապահովման փոփոխություն կամ վարկունակության այլ բարձրացում;
- Փոխարկման օպցիոնի ներառում;
- Ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները զգալիորեն տարբերվում են, եթե զեղչված ներկա դրամական հոսքերի արժեքը, համաձայն նոր պայմանների, ներառյալ ցանկացած վճարած միջնորդավճարները, համաձայն ցանկացած միջնորդավճարը և զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, առնվազն 10% - ով տարբերվում է մնացած դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից սկզբնական ֆինանսական պարտավորությունից:

Եթե փոփոխությունը էական չէ, ապա տարբերությունը՝ (1) մինչև փոփոխությունը պարտավորության հաշվեկշռային արժեքի միջև և (2) փոփոխությունից հետո դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում՝ որպես այլ օգուտների և վնասների փոփոխման օգուտ կամ վնաս:

#### **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամական միջոցներից և բանկերում պահվող դրամական միջոցներից, որոնց մարման սկզբնական ժամկետը 90 օրից պակաս է կամ հավասար է և ազատ պայմանագրային պարտավորություններից:

#### **Կապիտալ**

Կանոնադրական կապիտալը ճանաչվում է ստացված համալրումների իրական արժեքով:

### **4. ԿԱՐԵՎՈՐ ՀԱՇՎԱԴԱՅՆԱԿԱՆ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱԴՎԱԾ ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՔՅՈՒՐՆԵՐԸ**

Ընկերության հաշվապահական քաղաքականությունը կիրառելիս՝ Ընկերության ղեկավարությանն անհրաժեշտ է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք այլ արդյունքներից ակնհայտ չեն երևում: Գնահատումները և դրա հետ կապված ենթադրությունները հիմնված են նախկին փորձի և այլ համապատասխան գործոնների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումներում փոփոխությունները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, երբ փոփոխությունը տեղի է ունենում, եթե փոփոխությունը վերաբերում է միայն այդ ժամանակաշրջանին, կամ փոփոխությունը ճանաչվում է այդ և ապագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է ընթացիկ և ապագա ժամանակաշրջանների վրա:

#### **Հիմնական միջոցների գնահատված արժեքով**

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը իրականացրել է վերլուծություն, որպեսզի որոշի՝ արդյոք կան դրամաստեղծ միավորների արժեքովման որևէ գործոններ, ինչպես նաև իրականացրել է տարեկան արժեքովման փորձարկում հիմնական միջոցների համար:

Յուրաքանչյուր դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը որոշվել է հիմնվելով օգտագործվող արժեքի հաշվարկների վրա: Այս հաշվարկներն օգտագործում են դրամական միջոցների հոսքերի նախագծեր, որոնք հիմնված են ֆինանսական բյուջեների վրա և հաստատված ղեկավարության կողմից 5 տարի ժամկետով: Բյուջեները պատրաստելիս՝ ղեկավարությունը հաշվի է առնում նախկին փորձառությունը, ինչպես նաև իր նախագծումները համապատասխան դրամաստեղծ միավորների հետագա զարգացման և գործարկման մասով՝ այդ թվում նաև ընդհանուր ազդեցությունները: Չեղչման կիրառելի տոկոսադրույքը Ընկերության կապիտալի միջին կշռված արժեքն է:

Այս վերլուծության և փորձարկման արդյունքում Ընկերությունը եզրակացրել է, որ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և դրանից հետո ավարտված տարվա համար չեն պահանջվել արժեզրկման ծախսեր:

### Ակնկալվող պարտքային կորուստներ

Ընկերությունը պարբերաբար ստուգում է իր առևտրային և այլ դեբիտորական պարտքերը արժեզրկման համար:

Ընկերության ակնկալվող պարտքային կորուստները սահմանվում են դեբիտորական պարտքերի մնացորդներում արժեզրկումից կրած վնասները ճանաչելու համար: Կասկածելի պարտքերի վերաբերյալ պահուստների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 15-ում:

### Վարձակալության պարտավորություններ և օգտագործման իրավունքով ակտիվներ

ՖՀՄՍ 16 կիրառումը պահանջում է ղեկավարությունից օգտագործել դատողություններ վարձակալության համապատասխան պարտավորությունների վարձակալության համապատասխան ժամկետների որոշման հարցում: Վարձակալության կիրառելի պայմանագրերի ընդհանուր պայմանագրային վարձակալության ժամկետը 1 տարի է՝ երկարացման հավանական ժամկետով: Վարձակալության համապատասխան ժամկետը որոշելիս՝ ղեկավարությունը կիրառել է 4 տարի վարձակալության ժամկետը որպես վարձակալության համապատասխան ժամկետ՝ երկարացման պատմական նախկին իրադարձությունների հիմունքով շինությունների համար և 6 տարի փոխադրամիջոցների համար, ժամկետների երկարացման իրականացման ղեկավարության ունակության, իր ցանցի տեղակայման անընդհատության շրջանակներում ղեղադործական ցանցի/մասնաճյուղերի գործառկման բիզնես մոդելի համար:

## 5. ՀԱՍՈՒՅԹ

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
Ապրանքների վաճառքից	9,329,640	6,801,611
Ծառայությունների մատուցումից	134,138	46,623
Այլ	-	-
	<u>9,463,778</u>	<u>6,848,234</u>

## 6. ՎԱՃԱՌՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔ

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
Նյութական ծախսեր	7,346,197	6,086,851
Մաշվածություն	110,074	138,461
Հատուցումներ աշխատակիցներին	81,193	79,071
Այլ	18,005	31,875
	<u>7,555,469</u>	<u>6,336,258</u>

## 7. ԱՅԼ ԵՎԱՄՈՒՏ

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
ՀՄ-ի վաճառքից եկամուտ		
Անհատույց տրված ակտիվներից եկամուտ		
Փոխարժեքային տարբերությունից օգուտ		
Այլ	6,008	12,368
	<u>6,008</u>	<u>12,368</u>

## 8. ՏԱՐԱԾՄԱՆ ԵՎ ՇՈՒԿԱՅԱՎԱՐՄԱՆ ԾԱԽՍԵՐ

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
Հատուցումներ աշխատակիցներին	99,386	62,727
Մաշվածություն	110,077	42,576
Մարկետինգ և գովազդ	5,042	
Վառելիքի ծախսեր	83,817	59,163
Այլ	68,104	27,030
	<u>366,426</u>	<u>191,496</u>

## 9. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
Աշխատուժի ծախսեր	165,772	44,282
Գործուղման և Ներկայացուցչական ծախսեր	12,695	3,015
Աուդիտորական և ապահովագրության ծախսեր	16,200	14,696
Հաղորդակցման ծախսեր	3,551	
Գրասենյակային, կոմունալ ծառայություններ	26,486	14,708
Մաշվածություն և ամորտիզացիա	40,105	48,511

Զարկեր և տուրքեր	3,808	9,294
Բանկային ծախսեր	11,471	8,562
Վառելիք	918	5,702
Այլ	73,958	21,275
	<u>354,964</u>	<u>170,045</u>

#### 10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
Տոկոսային ծախս փոխկապակցված կողմերից ստացված փոխառությունների գծով	-	-
Տոկոսային ծախս բանկային օվերդրաֆտների և վարկերի գծով	<u>111,766</u>	<u>296,879</u>
	<u>111,766</u>	<u>296,879</u>

#### 11. Շահութահարկի գծով ծախս

##### Շահույթում կամ վնասում ճանաչված շահութահարկ

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
Ընթացիկ շահութահարկ	159,174	901
Գետածգված հարկային ծախսի (օգուտ)/ծախս		<u>(29,661)</u>
<b>Ընդամենը տարվա շահութահարկի գծով (օգուտ)/ծախս</b>	<u>159,174</u>	<u>(28,760)</u>

**Հետաձգված հարկային ակտիվներ/(պարտավորություններ)**

	2025 թ. հունվարի 1-ի դրությամբ	Առաջացած և հակադարձված ընթացիկ տարվա ընթացքում	2025 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Շահութահարկի հետաձգված ակտիվներ	4509	(4509)	-
Հիմնական միջոցներ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտք			
Առևտրային և այլ դեբիտորական պարտք			
Վարձակալության պարտավորություն	-		
	4509	(4509)	-
Շահութահարկի հետաձգված պարտավորություններ			

2024 և 2025թթ. կորպորատիվ շահութահարկի կիրառելի դրույքաչափը կազմել է 18%:

Շահույթ/(վնասը) նախքան հարկումը	2025թ.		2024թ.	
	884,300	%	55,395	%
Շահութահարկի գծով (ծախս)/օգուտ	(159,174)	-18%	(9,971)	-18%
Տարվա ընթացքում առաջացած դուրս գրված հարկային վնաս		0%		0%
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից եկամուտ/(վնաս)	(179,105)	-20,2%	(18,789)	-33.92%
Ֆինանսական ծախսերի գծով տարբերություններ	(111,766)	-12,6%		0%
Այլ մշտական տարբերություններ		0%		0%
	<b>(159,174)</b>	<b>18.0%</b>	<b>(28,760)</b>	<b>51.92%</b>

**12. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

Դասի անվանումը	Տող	Նախորդ տարվա վերջի մնացորդը	Ավելացում	Նվազեցում	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը
			Ընդամենը	Ընդամենը	
1	2	4	5	7	9
<b>Շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ</b>					
<i>Շենքեր</i>					
- հաշվեկշռային արժեք	010	747 610			723 825
- արժեք	011	759 564			759 564
- կուտակված մաշվածություն	012	11 954	23 785		35 739
<i>Մեքենաներ և սարքավորումներ</i>					
- հաշվեկշռային արժեք	040	1 240 166			599 593
- արժեք	041	1 666 240	76 986	391 444	1 351 782
- կուտակված մաշվածություն	042	426 074	326 115		752 189
<i>Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ</i>					
. հաշվեկշռային արժեք	060	185 354			122 706
. արժեք	061	245 376		58 619	186 757
. կուտակված մաշվածություն	062	60 022	4029		64 051
<i>Այլ հիմնական միջոցներ</i>					
- հաշվեկշռային արժեք	090	43 297			26 588
- արժեք	091	121 439	13 775	21 740	113 474
- կուտակված մաշվածություն	092	78 142	8744		86 886
<i>Ընդամենը շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ</i>					
- հաշվեկշռային արժեք	100	2 216 427			1 472 712
- արժեք	101	2 792 619	90 761	471 803	2 411 577
- կուտակված մաշվածություն	102	576 192	362 673		938 865
<i>Հողամասեր</i>					
- հաշվեկշռային արժեք					
- արժեք	103				
			90 700		90 700

«ՍԹԻԼ ԿՈՆՑԵՈՆ» ՍՊԸ

2025 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հազար ՀՀ դրամով

- կուտակված մաշվածություն				
Ֆինանսական վարձակալությամբ ստացված ՀՄ-ներ	104		800	800
Օգտագործման համար ոչ մատչելի շենքեր -հաշվեկշռային արժեք			75 323	75 323
- արժեք			80 983	80 983
- կուտակված մաշվածություն			5 660	5 660
Ընդամենը շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցներ		2 216 427		1 639 535

«ԱԹԻԼ ԿՈՆՑԵՈՆ» ՍՊԸ

2025 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ԳԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
Հազար ՀՀ դրամով

Տարվա ամփոփագիտն մասհանումները ծախսերին դասվել են հետևյալ կերպ.

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
Տարածման և շուկայավարման ծախսեր	110,077	42,576
Վաճառքի ծախսեր	110,074	138,461
Վարչական ծախսեր	40,105	48,511
<b>Մաշվածության ընդհանուր ծախս</b>	<b><u>260,256</u></b>	<b><u>229,548</u></b>

13. ՊԱՇԱՐՆԵՐ

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
Լյուբեր	1,556,027	2,982,107
Տարա և տարակյուբեր		
Պատրաստի արտադրանք	380,796	437,953
Անավարտ արտադրանք	67,197	7,806
Ապրանքներ	108,073	171,874
Այլ	10,667	50,225
	<b><u>2,122,760</u></b>	<b><u>3,649,965</u></b>

14. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԴԵՔԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏԵ

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
Առևտրային դեբիտորական պարտքեր	154,824	85,538
Այլ դեբիտորական պարտքեր	3,806	2,327
<b>Ընդամենը</b>	<b><u>158,630</u></b>	<b><u>87,865</u></b>
Պետական բյուջեյից ստացվելիք գումարներ	46,039	61,093
Առհաշիվ տրված գումարներ և կանխավճարներ	4,678	1,992,501
Այլ		
<b>Ընդամենը</b>	<b><u>209,347</u></b>	<b><u>2,141,459</u></b>

**15. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ**

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
Բանկային հաշիվներ	107,415	54,960
Արտարժույթային հաշիվներ բանկում	-	-
Կանխիկ դրամական միջոցներ	209,836	72,990
<b>Ընդամենը</b>	<b>317,251</b>	<b>127,950</b>

Բոլոր դրամական միջոցների և դրանց համարժեքների արժույթը ՀՀ դրամն է: Ոչ մի հաշվեկշիռ ժամկետանց կամ արժեզրկված չի:

**16. ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱԴԻՏԱԼ**

Կանոնադրական կապիտալը կազմում է 2,258,250 հազար ՀՀ դրամ:

**17. ՎԱՐԿԵՐ ԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
<i>Երկարաժամկետ բանկային վարկեր</i>		
Մնացորդը տարեսկզբին	315,612	483,078
<b>Մնացորդը տարեվերջին</b>	<b>662,956</b>	<b>315,612</b>
<i>Փոխառությունների կապակցված կողմերից</i>		
Մնացորդը տարեսկզբին	3,093,762	1,444,489
<b>Մնացորդը տարեվերջին</b>	<b>153,187</b>	<b>3,093,762</b>
<i>Կարճաժամկետ բանկային վարկեր</i>		
Մնացորդը տարեսկզբին	902,470	1,087,351
<b>Մնացորդը տարեվերջին</b>	<b>962,612</b>	<b>902,470</b>
<i>Կարճաժամկետ փոխառություններ</i>		
Մնացորդը տարեսկզբին	71,200	0
<b>Մնացորդը տարեվերջին</b>	<b>258,570</b>	<b>71,200</b>
<b>Ընդամենը</b>	<b>2,037,325</b>	<b>4,383,044</b>

Ընկերությունն ունի ստացված վարկեր ՀՀ առևտրային բանկերից: Վարկերն ապահովված են ընկերության հիմնական միջոցներով և շրջանառու միջոցներով: Բանկային վարկերն ունեն 2-ից 3 տարի մարման ժամկետ և տարեկան միջինը 10.9% դրամով և 9.9% ԱՄՆ դոլարով ստացված վարկերի համար միջին տոկոսադրույք:

**18. ԱՌԵՎՏՐԱՑԻՆ ԵՎ ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ԴԱՐՏՔԵՐ**

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
Առևտրային կրեդիտորական պարտք	1,141,213	775,932
Հաճախորդներից կանխավճարներ		48,930
Վճարման ենթակա հարկեր և տուրքեր	165,116	8,814
Այլ կրեդիտորական պարտք		0
Աշխատակիցներին վճարվող գումարներ	0	0
Այլ կրեդիտորական պարտքեր	35,980	22,169
<b>Ընդամենը</b>	<b><u>1,342,309</u></b>	<b><u>855,845</u></b>

Որոշակի ապրանքատեսակների ձեռքբերման վճարների միջին ժամկետը 1-4 ամիս է: Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով որևէ տոկոս չի գանձվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման համապատասխան քաղաքականություններ՝ կրեդիտորական բոլոր պարտքերը նախապես համաձայնեցված վճարման ժամկետներում վճարելու ապահովման նպատակով:

**19. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ**

**Կապիտալի կառավարում**

Ընկերությունը կառավարում է իր կապիտալն՝ ապահովելու գործունեության անընդհատության սկզբունքը, միևնույն ժամանակ առավելագույնի հասցնելով շահագրգիռ կողմերի հատուցը ներգրաված և սեփական միջոցների հավասարակշռության օպտիմալացման ճանապարհով: Ընկերության ընդհանուր ռազմավարությունն անփոփոխ է 2013 թ. ի վեր:

Ընկերության կապիտալի կառուցվածքը բաղկացած է զուտ պարտքից (վարկեր և փոխառություններ, ինչպես մանրամասն ներկայացված է ծանոթագրություն 18-ում, որը վերադարձվել է դրամական միջոցների և դրանց համարժեքների տեսքով) և սեփական կապիտալից (ներառում է թողարկված կապիտալը, պահուստները և կուտակված վնասները՝ ինչպես նկարագրված է ծանոթագրություն 17-ում):

Ընկերությունը ենթակա չէ կապիտալի գծով որևէ արտաքին կողմի սահմանած պահանջների:

Ընկերության ղեկավարությունը գնահատում է Ընկերության կապիտալին ներկայացված պահանջները՝ պահպանելու ֆինանսական արդյունավետ կառուցվածք միևնույն ժամանակ խուսափելով ավելորդ ֆինանսական լծակներից: Այս պարագայում հաշվի են առնվում Ընկերության պարտքի տարբեր դասերի ստորակարգման մակարդակները: Ընկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և կատարում կարգավորումներ՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների ռիսկային բնութագրերից: Կապիտալի կառուցվածքի պահպանման կամ ճշգրտման նպատակով Ընկերությունը կարող է ճշգրտել բաժնետերին տրվող շահաբաժինների քանակը, թողարկել նոր բաժնետոմսեր, վաճառել ակտիվները կամ նվազեցնել պարտքերը:

Ընկերության սեփական կապիտալի և փոխառու միջոցների միջև հարաբերակցությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հետևյալն է՝

	2025թ.	2024թ.
<b>Պարտք</b>	2,037,025	4,383,044
Փոխառություններ		
Հանած՝ Դրամական միջոցներ և բանկային հաշիվների մնացորդներ	(317,251)	(127,950)
<b>Չուտ պարտք</b>	<b>1,719,774</b>	<b>4,255,094</b>
<b>Սեփական կապիտալ</b>	<b>1,284,324</b>	<b>2,891,260</b>

- (i) Պարտքը սահմանվում է որպես երկարաժամկետ և կարճաժամկետ վարկեր և փոխառություններ (բացառությամբ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը):
- (ii) Սեփական կապիտալը ներառում է Ընկերության բոլոր կապիտալը և պահուստները, որոնք կառավարվում են որպես կապիտալ:

### Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները

Ընկերությունը ենթակա է ֆինանսական գործիքների հետ կապված բազմաթիվ ռիսկերի: Ռիսկերի հիմնական տեսակներն են շուկայական, վարկային և իրացվելության ռիսկերը:

### Շուկայական ռիսկ

Ընկերության գործունեությունը ենթակա է հիմնականում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետ կապված ֆինանսական ռիսկերին: Ընկերությունը տարբեր ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքներ չի կնքում իր արտարժույթային և տոկոսադրույքի ռիսկերին ենթարկվածության կառավարման նպատակով:

Ընկերության՝ շուկայական ռիսկերին ենթարկվածության կամ այդ ռիսկերի կառավարման ու գնահատման եղանակների փոփոխություններ չեն գրանցվել:

### Տոկոսադրույքի ռիսկ

Ընկերությունը չի ենթարկվում տոկոսադրույքի ռիսկի, քանի որ բոլոր տոկոսակիր գործիքները հանդիսանում են ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ: Հիմնական գործիքներն են բանկերից և փոխկապակցված կողմերից ստացված վարկերը և փոխառությունները:

### Վարկային ռիսկի կառավարում

Վարկային ռիսկ նշանակում է այն ռիսկը, երբ պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտավորությունները, ինչի արդյունքում Ընկերությունը ֆինանսական կորուստներ է կրում: Ընկերությունը որդեգրել է միայն վարկային առումով վստահելի գործընկերների հետ աշխատելու և, անհրաժեշտության դեպքում, բավարար չափով գրավ ձեռք բերելու քաղաքականությունը՝ որպես վճարումները չկատարելու արդյունքում ֆինանսական կորուստների նվազեցման միջոց: Վարկային ռիսկի ենթարկվածությունը վերահսկվում է գործընկերների նկատմամբ սահմանված սահմանափակումների միջոցով, որոնք վերանայվում և հաստատվում են ղեկավարության և ֆինանսական հարցերով վերահսկողի կողմից: Ընկերության վարկային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը ներկայացված է համապատասխան ակտիվների հաշվեկշռային արժեքով, ինչպես

Ներկայացված է ստորև: Առևտրային դեբիտորական պարտքերը բաղկացած են մեծ թվով հաճախորդներից: Ընթացիկ վարկային զնահատումը կատարվում է դեբիտորական պարտքերի ֆինանսական վիճակի հիման վրա: Ընկերությունը որևէ գործընկերոջ գծով վարկային ռիսկի ենթակա չէ: Գրեթե բոլոր առևտրային դեբիտորական պարտքերը Հայաստանից են: Գլխավոր գործընկերները հայկական մեծ սուպերմարկետներ են: Այլ գործընկերներ ներկայացնում են հազարավոր միջին և փոքր խանութներ:

Ընկերությունն ունի գրավի իրացում կամ այլ վարկային բարելավումներ իր որոշ գործընկերների ֆինանսական ակտիվների գծով վարկային ռիսկերի նվազեցման համար:

#### **Իրացվելիության ռիսկի կառավարում**

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը չի կարողանա կատարել իր պարտավորությունները:

Ընկերությունը կառավարում է իրացվելիության ռիսկը՝ ունենալով համապատասխան պահուստների, բանկային և պահուստային փոխառության պայմանագրեր, շարունակական մոնիտորինգ իրականացնելով կանխատեսված և իրական դրամական միջոցների հոսքերի նկատմամբ, ինչպես նաև համապատասխանեցնելով ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը:

**Ընկերության՝ ոչ շարունակական հիմունքներով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը (սակայն պահանջվում են իրական արժեքի բացահայտումները)**

Դեկլարությունը համարում է, որ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները, որոնք ճանաչվել են ֆինանսական հաշվետվություններում, մոտ են իրենց իրական արժեքներին:

### **1. ԳՈՐԾԱՐՁՆԵՐ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ**

#### **Առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրություն**

Ընկերության փոխկապակցված կողմերը ներառում են սեփականատերերին, ընդհանուր վերահսկողության տակ գտնվող կողմերին և առանցքային ղեկավարությանը:

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը.

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
Աշխատավարձ և պարգևատրումներ	13,438	8,067
<b>Ընդամենը</b>	<b>13,438</b>	<b>8,067</b>

**Փոխապակցված կողմերի կողմից տրամադրված փոխառություններ**

Հաշվետու տարվա ընթացքում ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են.

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
<b>Մասնակից</b>	2,010,749	2,224,730
Փոխառությունների ստացում		
Փոխառությունների մարում	(120,094)	(677,638)
Այլ գործարքներ		82,377
Մնացորդներ		
<b>Մասնակից</b>	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
<b>Ստացված փոխառություններ</b>	<u>1,799,839</u>	<u>2,733,858</u>
<b>Առհաշիվ տրված գումարներ</b>		<u>5</u>

**2. Պայմանական դեպքեր**

**Դատական վարույթներ**

Գործունեության բնականոն ընթացքում, ժամանակ առ ժամանակ, հաճախորդները և գործընկերներն ընկերության դեմ դատական վարույթներ և բողոքներ են ներկայացնում: Դեկլարությունը համոզված է, որ նման դատական վարույթները և բողոքներն անբարենպաստ ազդեցություն չեն ունենա ֆինանսական վիճակի կամ ընկերության ապագա գործունեության արդյունքների վրա, ուստի ֆինանսական հաշվետվություններում ոչ մի պահուստ չի ստեղծվել:

**Հարկում**

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և քննարկվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են սուուզման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային տարին շարունակում է բաց լինել հարկային մարմինների վերանայման համար՝ հաջորդ երեք օրացուցային տարիների ընթացքում:

Այս հանգամանքները կարող են հարկային ռիսկեր առաջացնել ՀՀ-ում, որոնք առավել նշանակալի են, քան այլ երկրներում: Դեկլարությունը կարծում է, որ համարժեքորեն է նախատեսել հարկային պարտավորությունները, հիմնվելով ՀՀ գործող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այդուհանդերձ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել և ազդեցությունը սույն ֆինանսական հաշվետվությունների վրա կարող է նշանակալի լինել, եթե այդ մարմիններին հաջողվի կիրարկել իրենց մեկնաբանությունները:

«ԱԹԻԼ ԿՈՆՏԵՈՆ» ՍՊԸ

2025 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ԳԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
*Հազար ՀՀ դրամով*

---